ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 1337-Ա « 20 » նոյեմբերի 2024թ.

ԴՐԱՄԱՇՆՈՐՀ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 78-րդ հոդվածի 2-րդ մասով և հիմք ընդունելով Երևանի քաղաքապետի 2024 թվականի հունվարի 18-ի հ.161-Ա որոշման 8-րդ հավելվածը (աղյուսակ 1), ինչպես նաև հաշվի առնելով Երևանի Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի 25.10.2024թ. հ.Ն/63055 գրությունը.

1.Հանձնարարել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչության պետին՝ Երևան քաղաքի 2024 թվականի բյուջեով, Երևանի քաղաքապետարանի մասով բյուջետային ծախսերի գործառական դասակարգման 09 բաժնի, 01 խմբի, 01 դասի «2. Նախադպրոցական ուսուցման կազմակերպման համար անհրաժեշտ գույքի ձեռքբերում» ծրագրով և տնտեսագիտական դասակարգման «Այլ կապիտալ դրամաշնորհներ» հոդվածով նախատեսված գումարներից «Երևանի հ.4 մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ին (այսուհետ՝ Կազմակերպություն) հատկացնել դրամաշնորհ՝ 537,000.0 (հինգ հարյուր երեսունյոթ հազար) դրամի չափով՝ Կազմակերպությանն թվով 3 ջեռուցման կաթսաները նորով փոխարինելու նպատակով:

2. Լիազորել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչության պետին՝ կնքել դրամաշնորհի հատկացման համապատասխան պայմանագիր:

3.Սույն կարգադրության կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչության պետի վրա:

4.Սույն կարգադրության կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարի վրա:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ